տարար 'ի սուրբ կամաց նորա։ Նա պըն-
դեսցէ զսիրտս ձեր, և նա պարգևեսցէ
զօրութիւն ընդդէմ չարին։ Եւ ընկալ-
ցիք դուք 'ի ցեռանէ օրհնութիւնս
բիւր, փոխան վաղանցուկ կենաց եր-
կրի՝ տացէ ձեզ զյաւիտենականու-
թիւնն։ Զի որ մեռանի վասն ճշմար-
տութեան՝ կեցցէ 'ի յաւիտեան։

Կանգնեցէք արդ զգեղարդունս,արքդ
զօրաւորք բանիւ, զի արութիւն եղիցի
ձեզ 'ի զէն մահաւորթ. և դուք ծառայք
ցեռան, մարտերուք արիաբար և ան-
սասան։

Հիմ զանգիտել ձեզ 'ի թշնամեաց,
որքան և իցէ թիւ նոցա։ Մի թէ թողցէ
ցէր զձեզ։ Ո՛չ... նովաւ և ընդ նմա՝
ցիր և ցան սփռեսցիք զսէգ և զամբար-
տաւան գունդս թշնամեաց ձերոց։

Ո՛չ ածէք զմտաւ զհին ձեր առած։
— Ունկն դիք. «Բոհեմիացիք, փառա-
ւոր է սպաս հարկանել զվիսոյ ազնուա-
կանի, տանել զդրօշ և բարձրացուցա-
նել բարձր զնշան նորա յաղթական»։

Եւ դուք, պիղծք և հուղկահարք,
հայեցարուք գամ մի ընդ վտանգն որ
զձեզ պատէն պաշարէ։ Կացէք մնա-
ցէք դուք անդ առկախեալք 'ի խորխո-
բատ աղամղի և տառապանաց, ուրա-
նօր դաւ և ազահութիւն ընդ հուպ խո-
բառոյզ արասցեն զձեզ։ Խորհեցարուք
քաջ, խորհեցարուք մինչդեռ կայ ձեզ
հնար տակաւին. խոյս տուք, ապրե-
ցարուք 'ի վտանգէն, և յօգուտ արկէք
զօրդ, ով արք ամբարիշտք։ Ահա վախ-
ճան՝ որ լարէ զորոգայթ ոտից անմե-
ղին։

Ի պահու անդ արիւնռուոդ պատե-
բազմին, մի միայն բան. — Կալարուք
զզէնս ձեր վասն արդարութեան. և
Տէր, միայն ճշմարիտ զօրութիւն ձեր,
պնդեսցէ զթուլացեալ բազուկս ձեր. —
այլ մի և միում ումեք խնայել, կամ
առնել շնորհուկս՝ ո ոք և իցէն։

Կապտագոյն ընդուսաֆ լճեր Ամերիկայի մէջ.

Այս երկիրը ըստ բաւականի ամէն կողմանէ ճանչցուած է գրեթէ բոլոր Եւրոպայի ազգաց, որուն վրայօք մեծամեծ գովեստներով խօսած և գրած են շատ ճանապարհորդներ՝ որոնք դէպ 'ի ան կողմերը տեսնելու դնացեր են և օրէ օր դեռ կ'երթան, այլ և այլ դիտողութիւններ ընելով։

Այս երկրին զարմանալիքներէն մէկը կը սեպուին կապտագոյն ընուսաֆ լճերէն ոմանք, Հագբորդ քաղաքէն 7 մղոն հեռու, Իւքիահ–Սիդքս կոչուած քաղաքին ճամբուն վրայ, որով ճամբորդաց փափաքը և հետաքրքրութիւնը աւելի շատցաւ՝ այս աղուոր և զարմանալի լճերը տեսնելու համար, որ Ամերիկայի նորութիւններէն մէկը կրնան սեպուիլ, միանգամայն և բնական։ Ասոնց չորս կողմը լեռներով պատած են, որոնց ծայրերը ան մեծամեծ և խորունկ լճերուն մէջ կը տեսնուին, և այն է պատճառը որ ջուրը այնպէս կապոյտ գոյնով կ'երևայ։ Ան աստիճանի մաքուր և թափանցիկ է աս լճերուն ջուրը, որ աչքով մինչև 20 և 30 ոտք խորութեամբ եղած բանը մէջը որոշ կերպով կը տեսնուի։

Այս կապտագոյն ընուսաֆ լճերը բաղմաթիւ են Ամերիկայի մէջ և քիչ շատ մէկ մէկու հաւասար մեծութեամբ։ ասոնց երկայնութիւնը 1 մղոն, իսկ լայնութիւն ½ մղոնի չափ է ամենաստոյգ հաշուով։ Անօգուտ տեղ փորձեցին ասոնց խորութիւնը իմանալու համար, և մինչև ցայսօրս ստոյգ չէ, և այնպէս կը համարուի որ ալ ասկէ վերջն ալ պիտի չկարենան անոնց ստոյգ չափը իմանալ։ Այս ջուրերուն մէջ կը գտնուին ամէն տեսակ գեղեցիկ ձկներ, մանաւանդ կարմրախայտ ընուսաֆը, գետաձրկներ և այլն. մէկ խօսքով այնպիսի համեղ ձկներ որոնք մեծամեծաց սեղաններուն պատիւ կրնան ընել։